ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. մայիսի 13-ից 17-ը Շվեյցարիայի Ժնև քաղաքում կայացած ԱՌՆ գլոբալ պլատֆորմին Արտակարգ իրավիճակների նախարարության պատվիրակության մասնակցության վերբերյալ

1. **Անունը, ազգանունը.**

1. Ֆելիքս Ցոլակյան
2. Արտակ Սաֆարյան
3. Լուսինե Ժամհարյան
4. Արմինե Հայրապետյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

1. Արտակարգ իրավիճակների նախարար
2. Արտակարգ իրավիճակների նախարարի խորհրդական
3. Օտարերկրյա պետություններում, միջազգային կազմակերպություններում, ՀՀ այլ գերատեսչություններում ՀՀ ԱԻՆ ներկայացուցիչ
4. Օտարերկրյա պետություններում, միջազգային կազմակերպություններում, ՀՀ այլ գերատեսչություններում ՀՀ ԱԻՆ ներկայացուցիչ (Սենդայի ազգային համակարգող):

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

2019թ. մայիսի 13-ից 17-ը Շվեյցարիա, Ժնև

4. **Հրավիրող կողմը.**

ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման գրասենյակ

5. **Գործուղման նպատակը.**

Գործուղման նպատակն էր ներկայացնել ԱՌՆ ոլորտում Հայաստանի փորձը և զարգացման միտումները

6. **Քննարկված թեմաները.**

Աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումները, 2018թ. հունիսի 26-ից 27-ը Երևանում անցկացված «Աղետների ռիսկի նվազեցման Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի տարածաշրջանային պլատֆորմի» արդյունքները, առկա միջազգային համագործակցությունը և դրանց հնարավոր ակտիվացումը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

- պաշտոնական հայտարարություն,
- Բարձրաստիճան երկխոսություն, որտեղ ներկայացվել է 2018թ. հունիսի 26-ից 27-ը Երևանում անցկացված «Աղետների ռիսկի նվազեցման Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի տարածաշրջանային պլատֆորմի» արդյունքները, այդ թվում՝ Երևանյան հռչակագրի կարևորագույն դրույթները,
- Նախարարական կլոր սեղան քննարկում ԱՌՆ, կլիմայի փոփոխության և կայուն զարգացման նպատակների վերբերյալ,
- Պլատֆորմի շրջանակներում անց են կացվել մի շարք հանդիպումներ.

✓ ՄԱԿ-ի ԱՌՆ գրասենյակ ԱՌՆ գծով հատուկ ներկայացուցիչ Մամի Միզուտորի,

✓ ՄԱԶԾ Ճգնաժամային բյուրոյի տնօրեն Ասակո Օկայի,

✓ Համաշխարհային բանկի ԱՌԿ և քաղաքային հարցերով տնօրեն Սամեհ Վահբա,

✓ <<Swissteamleaders>> ընկերություն ղեկավար Մարիո Սիմազ:

- Պատվիրակության անդամները մասնակցել են համաժողովի շրջանակներում կազմակերպված մի շարք նստաշրջանների, ներկայացնելով հայաստանյան փորձը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություններ է ձեռք բերվել ակտիվացնել միջազգային համագործակցությունը:

Համաշխարհային բանկը խոստացել է նոր ծրագրային առաջարկով հանդես գալ:

9. **Գործուղվողը.**

Ֆելիքս Ցոլակյան, Արտակ Սաֆարյան, Լուսինե Ժամհարյան, Արմինե Հայրապետյան

Պատվիրակության ղեկավար.

Ֆելիքս Ցոլակյան

Ստորագրությունը, ամսաթիվը.

22.05.2019թ.